# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 99-րդ կետի՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը «Անասնաբուժություն», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Ագրոնոմիա», «Բույսերի պաշտպանություն», «Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա», «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Ագրոէկոլոգիա», «Անասնաբուծություն» մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի մինչև 50 տոկոսի չափով առաջին հայտով կազմակերպում է նպատակային ընդունելություն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

Նշված մասնագիտությունների գծով նպատակային ընդունելություն կազմակերպելու համար՝ խնդրվում է մինչև 2015 թվականի մայիսի 11-ը ՀՀ Արմավիրի մարզպետարան ներկայացնել համապատասխան հայտեր:

***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան***